



Լ. ՀՈՒԳԱՍՉՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՌԱԳԻՐ ԳԱՆՁԵՐԸ

Վերջերս Վենետիկում Մխիթարյան միաբանության (Ս. Ղազար կղզի) տպարանը իտալերեն և անգլերեն զուգահեռ տեքստերով լույս է ընծայել «Հայկական մանրանկարչություն» պատկերազարդ գիրքը, որի հրատարակության մասին գիտական հասարակայնությանը ծանուցվել էր շուրջ տասնինգ տարի առաջ:

Այս աշխատությունը նվիրված է հայ մշակութային ճշանավոր օջախում՝ Ս. Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանության գրադարանի նկարագարդ ձեռագրերին, այսինքն՝ հայկական մատյանների խոշոր հավաքածուներից մեկի ընտիր գոհարներին։ Այստեղ պահվող գրչագիր գանձերի հետ գիտնականներին հիմնավորապես ծանոթացրեց անվանի հայագետ, Հայաստանի ԳԱ արտասահմանյան անդամ, Աերկայումս հանգուցյալ Ս. Տեր-Ներսեսյանի Փարիզում 1936—1937 թթ. ֆրանսերեն հրատարակված ծավալուն, երկհատոր ուսումնասիրությունը, ուր մանրակրկիտ քննության են ենթարկված 12—14-րդ դդ. առավել հոյակապ ձևավորված գրքերը¹։ Ավելի վաղ ժամանակների՝ 9—11-րդ դդ. և հետագա շրջանի ծաղկված ու Ս. Ղազարում պահվող մատյանները գիտական շրջանառության մեջ դրվեցին Հ. Մ. Շանաշյանի 1966 թ. լույս ընծայած գրքի միջոցով²։ Վերջինս ընթերցողներին մատուցվեց որպես Վենետիկի Մխիթարյան միաբանության նկարագարդ ձեռագրերի հետազոտությունն ընդգրկող երկերի առաջին հատորը։ Ցավոք, մահը խանգարեց Հ. Մ. Շանաշյանին պատրաստել երկրորդ հատորը և նախնական մտահղացման համաձայն որպես այդպիսին պիտի

¹ Տե՛ս S. Der Nersessian, Manuscrits Arméniens illustrés des XIIe, XIII et XIVe siècles de la Bibliothèque des Pères Mekhitaristes de Venise, Paris, 1937.

² Տե՛ս Հ. Մ. Շանաշյան, Հայկական մանրանկարչություն, հատ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1966։

հանդես գար խնդրո առարկա նոր գիրքը: Հանգամանքների բերումով գրախոսվող հրատարակությունը չի ներկայանում որպես երկրորդ հատոր, բայց, այդուհանդերձ, այն գիտական շրջանառության մեջ է դնում նախորդ ուսումնասիրություններից դուրս մնացած, գեղարվեստական տեսանկյունից կարևոր, առանձին ձեռագրերի մանրանկարները:

Այս նոր գիրքը հրատարակության է պատրաստել Վենետիկի Մխիթարյան միաբանության նախկին աբբահայր Հ. Ներսես Տեր-Նարսեսյանը, որը խմբագրել, համառոտել, պարզեցրել է Հ. Մ. Ծանաշյանի նշված հատորի տեքստը, կազմել ծանոթագրությունները, մատենագիտության և նկարների ցանկերը, թոռուցիկ նկարագրել ձեռագրերը:

Խնդրո առարկա աշխատության զուսպ ներածականին հաջորդում է «Հայ մանրանկարչության ակունքներն ու առանձնահատկությունները» գլուխը: Այստեղ նշվում է, որ թեև 5—7-րդ դդ. հայ գրքարվեստի օրինակները չեն պահպանվել, բայց դրանց երբեմնի գոյության մասին են հուշում մեզ հասած հնագույն եկեղեցիների որմնանկարները: Բացի այդ, ծաղկված Ավետարանագրքերի մասին է հիշատակվում Վրթանես Քերտողի (6—7-րդ դդ.) պատկերամարտների դեմ ուղղված հանրահայտ ճառի մեջ: Այստեղ հիշատակվում է, որ Մովսես Եղվարդեցու կաթողիկոսության օրոք (574—604 թթ.) սկիզբ առած հակաքաղքեղոնական շարժումները պատճառ են դառնում ազգային շեշտված ուղղվածություն ունեցող արվեստի երկերի ստեղծման: Դժբախտաբար այդ շրջանի հուշարձանները ենթարկվել են ժամանակի պերին կամ թշնամի այլազգիների կողոպուտին:

Գրքի առաջին բաժնում սեղմ բնութագրվում է հայ գրքարվեստի ազգային դիմագիծը և իրավացիորեն նկատվում է, որ հայ արվեստի անկախությունը հատուկ դրսևորում է գտել Բարձր Հայքի մանրանկարների պատկերագրության մեջ, իսկ Կիլիկյան ծաղկողները և Թորոս Ռուսինը հայ մատենական նկարչությունը օժտելով նշանակալից նորամուծություններով, նրա համար պատվավոր տեղ են ապահովել քրիստոնեական արվեստի մեջ: Գըրքի այս մասում կարևորվում են հայ գրքարվեստի պատմության համար չորս հիմնական աշխարհագրական տարածքներ՝ Բարձր Հայքը, բյուզանդական կայսրության հայկական գաղթօջախները, Հայկական Կիլիկիան և հայկական սփյուռքը, որը սկիզբ է առնում Կիլիկյան պետության անկումից հետո (1375 թ.):

Հ. Մ. Ծանաշյանի հեղինակած այս փայլուն ներածականը լճաթերցելիս չի կարելի չհամաձայնել այն կարծիքի հետ, որ Բարձր Հայքի մանրանկարիչները ավելի մեծ նշանակություն են տալիս երկրաչափական գծանկարին, քան թե գույների շլացուցիչ խաղին և մեծ սեր են տածում զարդարին ու պատկերագրական հավասարակշռության նկատմամբ, իսկ Կիլիկիացիները ձգտում են դեպի գույների նրբությունը, բանաստեղծականությունը, հարստությունը, մանրամասների ներդաշնակությունը և հիացնում են զարդաների բարձրաճաշակ տարրերակված մատուցումով: Կիլիկիայի ծաղկողները կյանքից առնված արտահայտություններով, նույնիսկ որոշ չափով իրապաշտական ոգով կենդանացնում են ավետարանական և աստվածաշնչական պատկերները:

Գրքի այս հատվածին հաջորդող և նոյնագեն Հ. Մ. Ծանաշյանի գրչին պատկանող «Ընդհանուր հայացք հայ մանրանկարչության տարրեր կենտրոնների վրա» բաժնում համառոտ ներկայացվում են՝ այս ժլատ փաստերը, որոնք հանդիպում են հայկական աղբյուրներում տարրեր վանքերում հաս-

տառված հայ գրիչների ու մանրանկարիչների կենտրոնների մասին: Հետաքրքիր են 6-րդ դարում Վանքո մենաստանում ձեռագրերի ընդօրինակմամբ գրաղվող երեսունվեց վանականների և Տաթևի վանքի հինգ հարյուր հոգեվորականների շարքում հաև գրիչների ու մանրանկարիչների գոյության մասին պատմիչ Ստեփանոս Օրբելյանի պահպանած տեղեկությունները: Գրքի այս մասում մի շարք էջեր են հատկացված աշխարհում ամենահայտնի հայկական ձեռագրի՝ Էջմիածնի 989 թ. Ավետարանի (Երևան, Մաշտոցի Մատենադարան, ձեռ. 2374) մանրանկարչության ներկայացմանը: Այս մատյանին նվիրված հատվածը վերաբերաբար կենակի կլիներ, որ վերանայվեր տարիներ առաջ Հ. Մ. Շանաշյանի գրած տեքստը և նորից չափացուցվեին Էջմիածնի Ավետարանի վերջում կարված 6—7-րդ դարերի թերթերի ոչ ասորական, այլ հայկական ծագման մասին անցյալում եղած տեսակետները: Այս մասի շարադրանքը նոր հնաշեղություն կստանար, եթե հիշատակվեր հնագույն նկարագրդ հայկական այդ թերթերի հակասորական ուղղվածության մասին, որի վերաբերյալ մեկ տասնամյակ առաջ խոր և համոզիչ ուսումնասիրություն է գրել արվեստի անվանի պատմաբան, ամերիկացի Թ. Մեթյուսը³:

Գրքի այս բաժնում առանձնահատով տեղ է զբաղեցնում նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության առավել ճշանակալից մատյանի՝ 862 թ. Մըլքեի Ավետարանի (ձեռ. 1144/86) մանրանկարների լուսաբանությունը։ Սա ճշգրիտ թվական ունեցող հայկական աւմենահին նկարազարդ ձեռագիրն է և այդ հանգամանքով է պայմանավորված հուշարձանին տրվող բացառիկ կարևորությունը։

«Հետազա դարերի արտադրանքը» խորագրի ներքո Հ. Մ. Ծանաշյանը կողք-կողքի է բերում 10-րդ դարից սկիզբ առնող և աշխարհի տարբեր հավաքածուներում գտնվող հայ գրքարվեստի առավել աչքի ընկնող նմուշները: Գրքի այս հատվածում թողոցիկ բնորոշված է նաև 1193 թ. Ակնոայի (Կիլիկիա) Ավետարանի (ձեռ. 1635/125) սքանչելի մանրանկարչությունը: Ներկա Ամբրոնացու և նրա եղբոր՝ Հեթումի համար Կոստանդին Սկնուցու լամբրոնացու և նրա եղբոր՝ Հեթումի համար Կոստանդին Սկնուցու լամբրոնակած և ծաղկած այս ձեռագրի ընտիր ձևավորումների վերլուծությունը և նկարների վերատպությունները դուրս էին մնացել Մ. Ծանաշյանի 1966 թ. գրքից, բայց 1937 թ. մտցվել են գիտական շրջանառության մեջ Ա. Տեր-Ներսեսյանի խոր ուսումնասիրության շնորհիվ: Նկարիչ և բանասեր, հայ մշակույթի մեծ երախտավոր Ա. Ֆեթվաճյանի կատարած լանդօրինակության շնորհիվ դեռևս 1885 թ. Հ. Ղ. Ալիշանի «Սիսուան» աշխատության մեկը⁴ և մեջ գունավոր վերարտադրվել էր այս մատյանի պատկերներից մեկը⁴ և վերջապես գրախոսվող գրքի մեջ առաջին անգամ ներկայացված են ձեռագրերի մեջ մանրանկարները: Կիլիկիայի տարածքում 12-րդ դարում վրացի մի շարք մանրանկարները: Կիլիկիայի տարածքում 12-րդ դարում վրացի մի շարք մանրանկարները:

³ See Th. F. Mathews, The Early Armenian Iconography Program of the Ejmiacin Gospel (Erevan, Matenadaran MS. 2374 olim' 229)—Dumbarton Oaks Symposium 1980, East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period; Washington, 1982, p. 199—215.

⁴ Տես Սիստան համագրութիւն հայկական Կիլիկիոյ և Լեռնա Մեծագործ, համարեալ
ի Բ. Ղետիունու Վ. Ալիշան, Վեճետիկ—Ս. Ղազար, 1885, էջ 84—85:

Միհթարյան հավաքածուի մաս կազմող ձեռագրական միավորներից գրքի այս բաժնում հիշված են նաև հայկական ամենամեծ մատյանի՝ 1204 թ. Մշո Շառընտիրի (Երևան, Մաշտոցի Մատենադարան, ձեռ. 7729) 17 թերթերը, որոնք դեռևս անցյալ դարում Ս. Ղազար է ուղարկել Հ. Ներսես Սարգիսյանը: Այստեղ թուցիկ հիշատակված է համբավավոր Կիրակոս գրչի և մանրանկարչի Հոռմկլայում 1244 թ. ընդօրինակած Միհթարյանների գրադարանում գտնվող Ավետարանը (ձեռ. 69/151), որի նկարագրումների մասին ոչ մի գաղափար չունենք:

Այս հատվածում 14-րդ դ. հայ գրքարվեստի կապակցությամբ ներկայացվում է Սյունիքում աշխատած հոյակապ ծաղկող Թորոս Տարոնացու գործունեությունը: Նրա ձևավորած մատյաններից Ս. Ղազարում է հանգրվանել 1307 թ. Ավետարանը (ձեռ. 1917), որի մասին այստեղ թեև չի նշվում, բայց պատկերագրումների բաժնում առաջին անգամ հանդիպում են ձեռագրի մանրանկարների գունավոր վերատպությունները, որոնք բացահայտում են անզուգական երփնագրողի ներկապնակի սքանչելի գունային համադրությունները: Այս մատյանը Գլաճորի հնագույն նկարագրող գրքերից է և Թորոս Տարոնացուց մեզ հասած առաջին նկարագրող հատորը: Ժամանակին Ս. Տեր-Ներսեսյանը մանրակրկիտ քննության է ենթարկել այս հուշարձանը⁵, իսկ վերջին տասնամյակներում այն, ինչպես և Թորոս Տարոնացու արվեստը առհասարակ արժանացել է Թ. Մեթյուսի ուշադրությանը⁶: Այստեղ հակիրճ գնահատական է տրված 14-րդ կամ 15-րդ դարերում հավանաբար Կիլիկիայում ստեղծված Ալեքսանդր Մակեդոնացու կյանքը ընդգրկող հատորի (ձեռ. 424) ձևավորումներին, որոնք առաջին անգամ են գունավոր վերատպություններով դրվում գիտական շրջանառության մեջ: Մոռացված չեն նաև Միհթարյանների գրադարանին նվիրաբերված Հ. Քյուրտյանի հավաքածուի մաս կազմող նույն երկի նկարագրող մեկ այլ օրինակը, որը Վանի շրջանում ծաղկել է բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին: Դժբախտաբար, ձեռագրի մասին հաղորդված չեն այլ տվյալներ և չեն վերարտադրված մանրանկարները:

Խլաթում 1418—1422 թթ. ընթացքում Կարապետ գրչի և մանրանկարիչ, բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի համագործակցությամբ է ծնունդ առել Միհթարյան միաբանությանը պատկանող Աստվածաշունչը (ձեռ. 280/10), որը երբեւ մանրակրկիտ արվեստաբանական քննության չի ենթարկվել և մանրանկարները երբեք չեն հրատարակվել: Այստեղ առաջին անգամ գունավոր վերարտադրվող այդ ձեռագրի նկարագրումների հետ ոճական նմանություններ ունեն 1428 թ. Մաղարդավանքում Գրիգոր գրչի ընդօրինակած Ավետարանի (ձեռ. 942/91) լուսանցագրերը, որոնց հեղինակը, ըստ նկարիչ, արվեստաբան Օ. Ավետիսյանի, Մկրտիչ Նաղաշն է:

⁵ Տե՛ս S. Der Nersessian, Manuscrits arméniens illustrés..., p. 110—136.

⁶ Տե՛ս Th. F. Mathews, The Annunciation at the well: A metaphor of Armenian monophysitism.—In: Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6), Ed. by Th. Samuelian and M. Stone, Chico, California, 1983, p. 343—356; M. V. Orna, Th. F. Mathews, Pigment Analysis of the Glajor Gospel book of U. C. L. A.—Studies in Conservation, 26(1981), p. 57—72; D. E. Cabelli, M. V. Orna, Th. F. Mathews, Analysis of Medieval Pigments from Cilician Armenia.—Advances in Chemistry, Washington, D. C. 1984, p. 243—244; S. Weisburd, The Art Detectiv Science brings a new perspective to the study of art.—Science News, 1988, April 23, vol. 133, No. 17, p. 264—267.

կան ուսումնասիրությունների հրատարակություն, բ) հայ դասական գրականության բնագրերի խմբագրություն և հրատարակություն, գ) հունական և ասորական հայրաբանական գրականության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հայագիտական երկերի լույս ընծայում:

Գրախոսվող հատորի այս հատվածում մեջբերված են Մխիթարյան հայրերի կոթողային հրատարակությունները, որոնց շարքը սկսվում է Մխիթար Աբբայի «Հայկազյան բառարանով», հ. Մ. Չամչյանի «Պատմություն հայոց» երկասիրությամբ, հ. Մ. Ավգերյանի «Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց որք կան ի Տոնացուցի եկեղեցվոյ Հայաստանեայց» աշխատությամբ, հի. Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմելյանի, Մ. Ավգերյանի «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» հատորներով, հ. Ղ. Ալիշանի գորքերով և այլն: Հայ պատմիչների երկերի հրատարակությունից բացի Մխիթարյան միաբանությանը մեծ փառք է բերել հայ հեղինակների աստվածաբանական ժառանգության լույս ընծայումը: Եվրոպական հայագետները, մասնավորապես հայրաբանության ուսումնասիրողները, բարձր գնահատական են տվել հույն և ասորի աստվածաբանների գործերի դեռևս 5-րդ դարից սկիզբ առնող հայերեն թարգմանությունների հրատարակություններին, որոնք իրականացրել են Մխիթարյան միաբանները:

Ավելի քան երկու հարյուր տարի տևող այս աշխատանքը շարունակվում է նաև այսօր: Մխիթարյան հայրերի հաջորդները մեր օրերում ևս հարստացնում են հայագիտությունը բացառիկ աշխատություններով, որի վկայությունն է և գրախոսվող գիրքը:

Այս նոր հատորը ըստ ամենայնի գնահատելիս պետք է անպայման հաշվի առնել նաև նրա պատկերազարդումների հմուտ ընտրությունը, որի համար պարտական ենք հ. Ներսես Տեր-Ներսեսյանին: Նկարների բաժնում պատվավոր տեղ են զբաղեցնում Մխիթարյան միաբանության երկու հնագույն ձեռագրերի՝ հավանորեն Անիի Բագրատունիներից մեկի պատվերով ստեղծված 10-րդ կամ 11-րդ դդ. Տրապիզոնի Ավետարանի (ձեռ. 1400/108) և Մակեդոնիայի Սուրբանապոլիս քաղաքում բյուզանդական բանակի զորական Հովհաննես Պոռտոսպաթարի 1007 թ. պատվիրած Ավետարանի (ձեռ. 887/116) փառահեղ մանրանկարների վերատպությունները: Ի դեպ, այս երկրորդ մատյանում պահպանված Հովհաննես Պոռտոսպաթարի պատկերին հ. Մ. Շանաշյանից հետո անդրադառնել է հույն գիտնական Յ. Սպաթարակիսը, անելով առանձին ուշագրավ դիտողություններ⁷: Պատկերազարդումների բաժնում մասնավոր հիշատակության են արժանի Հուսիկ գրչի ընդօրինակած Ավետարանի (ձեռ. 141/102) նկարները, որոնք այստեղ, ինչպես 1966 թթ. հ. Մ. Շանաշյանի գրքում, թվագրված են 11-րդ դարով, բայց Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով (որին համամիտ ենք և մենք) 12-րդ դ. Վերջի գործ են⁸: Ս. Տեր-Ներսեսյանին հետևելով, 13-րդ դարում ստեղծված պետք է համարել այստեղ որպես 11-րդ դ. աշխատանք նշված Ուրիայի Ավետարանի (ձեռ. 888/159) պատկերազարդումները⁹: Երկու վերատպություններով է ներկայացված Խարբերդի գրքարվեստի հազվագյուտ նմուշներից մեկի՝ 1205 թ. Կողման գրչի ընդօրինակած Ավետարանի (ձեռ. 938/88)

⁷ See I. Spatharakis, The Portrait in Byzantine Illuminated Manuscripts Leiden, 1976, p. 55–57.

⁸ See S. Der Nersessian, Manuscrits arméniens illustrés..., p. 18.

⁹ See նոյն տեղում, էջ 102:

մանրանկարչությունը։ Դրանց կողքին հանդիպում են 13-րդ դարի հայունի ծաղկողներից Խգճատիոս Հռոմոսցու 1214 թ. ընդօրինակած և ձևավորած Հավուց Թատի Ավետարանի (ձեռ. 151/134), Մելիտենեի մոտ՝ Չառնուկի մեմատանում 1248 թ. գրիշ և մանրանկարիչ Սարգիսի նկարազարդած գիրք Զեռնադրության (ձեռ. 1657/440), մանրանկարիչ Գրիգորի 1232 թ. Թեոդոսիոսի պատկերների (Կարինի) Ավետարանի (ձեռ. 325/129) պատկերների վերատպությունները։ Թերևս տեղին է նշել, որ այս վերջին ձեռագրի մանրանկարներին հ. Մ. Շանաշյանից հետո անդրադարձել են հայ գրքարվեստի անվանի գիտակ Տ. Ա. Իզմայլովան¹⁰ և տողերիս հեղինակը¹¹։

Գրքի այս հատվածին ծանոթանալիս կարելի է հիանալ նշանավոր կիլիկյան վարպետ Սարգիս Պիծակի 1331 թ. ծաղկած Ավետարանի (ձեռ. 16/97) պատկերներով, որոնցից գույնով է վերարտադրված Մատթեոս ավետարանչի առաջ ծնկաչոք ցուցադրված արվեստագետի ինքնանկարը։ Հարկ է նշել, որ գիտական հասարակայնությանը այս ձեռագրի ձևավորումների գույնները նախկինում ծանոթ էին Լոռն Դ արքային ներկայացնող մանրանկարի գունավոր վերատպության միջոցով¹²։ Առաջին անգամ այս գրքում է մեկ գունավոր լուսանկարով ցուցադրված համբավավոր երփնագրող Ավագի նկարազարդած բազմաթիվ մատյաններից մեկի՝ Սուլթանիայում՝ 1341 թ. նրա ծաղկած Աստվածաշնչի (ձեռ. 935/8) մանրանկարչությունը։ Ոչ մի ժողովրդի գրքարվեստին են առնչվում Հռոմում գրիշ և մանրանկարիչ Հովհաննես քահանայի 1254 թ. ձևավորած Ավետարանի (ձեռ. 1374/90) պատկերները, որոնք մեր մատենական նկարչության զարմանալի նմուշներն են և վերջերս են դրվել գիտական շրջանառության մեջ¹³։

Պատկերների բաժնում հանդիպող անօրինակ գեղարվեստական մի երկ է «Խաչելության» տեսարանով փայտե կազմը, որը զարդարում է հայր Մինասի 17-րդ դ. Ավետարանը (ձեռ. 1580/183)։

Գունավոր վերատպությունների այսպիսի բացառիկ ընտրությունը լրացնուի կարևոր արժեք է հաղորդում գրախոսվող հատորին։

Գրախոսվող գրքում կան որոշ անճշտություններ, որոնք սակայն չեն նսեմացնում հատորի նշանակությունը։ Օրինակ Էջ 94-ում Ալիադ Վանքի (Երզնկա) 1200 թ. Ավետարանը նշված է որպես Գևորգյան հավաքածուի (Նյու Յորք) սեփականություն, մինչդեռ այդ ձեռագիրը փոխել է իր հասցեն և տարիներ ի վեր գտնվում է Լոնդոնի Բրիտանական գրադարանում (Or. 13654)¹⁴։ Էջ 98-ում ասվում է, որ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի հավաքածուի 2568 ձեռագրում Վասակ իշխանն ու իր որդիները ծնկաչոք պատկերված են «Խաչելության» առաջ, մինչդեռ իրականում նրանք կանգնած են Քրիստոսի առաջ՝ այսպես կոչված «Գթության աստվածամոր» հովանական գրադարանում։

¹⁰ Տե՛ս T. A. Izmailova, The Origin and Date of a Ritual Manuscript (No. 1159/321) in the Mekhitarits Library, Venice.—In: Armenian Studies, Etudes Arméniennes in Memoriam Haïg Berbérian, Ed. by D. Kouymjian, Lisboa, 1986, p. 333—356.

¹¹ Տե՛ս Լ. Բ. Չուգասյան, Գրիգոր Ծաղկող, Երևան 1986, էջ 10, 12, 15, 19, 24, 26, 30, 31, 99—105, 109, 122, 123, 132, 133, 137, 138։

¹² Տե՛ս Սիսուան..., էջ 480—481։

¹³ Տե՛ս A. Alpago Novello, G. Jeni, A. Manoukian, A. Pensa, G. Uluhogian, B. L. Zekiyen, Gli Armeni, Milano, 1986, p. 46—47։

¹⁴ Տե՛ս V. Nersessian, Armenian Illuminated Gospel Books, London, 1987, p. 18—21։

վորության ներքո: Ի դեպ, այդ մատյանը այստեղ թվագրված է 1260—1270 թթ., մինչդեռ վերջերս այն համարվել է 1268—1284 թթ. աշխատանք¹⁵:

Այս նկատողությունները անշուշտ չեն կարող նսեմացնել գրախոսվող գործի արժեքը:

Այս հատորը եզրափակվում է օգտագործված պատկերների ցանկով և հայ մանրանկարչությանը վերաբերող նորագույն մասնագիտական գրականության ցուցակով, որոնք հեղինակել է հ. Ն. Տեր-Ներսեսյանը: Վենետիկի Միջիադարյան միաբանության աբբահոր պատրաստած այս շքեղ հատորը կարևոր երևույթ է հայ գրքարվեստի ուսումնասիրման բնագավառում և դուռ է բացում հետագա նոր աշխատությունների, որոնք աստիճանաբար ավելի կլրացնեն գիտնականների իմացությունը Ս. Ղազար կղզու ձեռագիր գանձերի մասին:

¹⁵ St'u Armenian Art Treasures of Jerusalem, Ed. by B. Narkiss, In collaboration with M. E. Stone, Historical Survey by A. K. Sanjian, New Roehelle, 1979, p. 64, 69—71.

